ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 հուլիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

101
(3310)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՍՏԵՐ ԿՈՆՋՈՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախորդ առավոտից պայթած սկանդալը, երբ հրապարակվեց, որ Հայկ Կոնջորյանի եղբորը՝ Ավետ Կոնջորյանին իր տան շքամուտքի մոտ՝ տեսախցիկների առկայությամբ ծեծի են ենթարկել, իշխող թիմի համար տհաճ անակնկալ էր: Օգոստոսի 2-ի ԱԺ առաջին նիստից առաջ նման քրեական պատմությունը լուրջ հարված է ՔՊ վարկանիշին, ինչի մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում դեռ ոչ պաշտոնապես ասացին ՔՊ վերնախավի՝ վարչության մի քանի անդամներ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ անգամ ՔՊ-ում մտադիր են Ավետ Կոնջորյանի վարքը՝ իբրեւ ՔՊ-ական եւ ԱԺ փոխնախագահի թեկնածու Հայկ Կոնջորյանի եղբայր, քննարկել կուսակցությունում եւ որոշում կայացնել: Բանն այն է, որ թեեւ ծեծվողը Ավետ Կոնջորյանն է, բայց թիմում ամենեւին նրան չեն համարում տուժող:

Իսկ մինչ այս «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է փաստեր Կոնջորյանների ընտանիքի մասին, որոնք այս տարիներին չեն նկատվել իշխող ուժի, առավել եւս ՔՊ ղեկավար, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից: Երբ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը Նիկոլ Փաշինյանին հարց ուղղեց (https://www.aravot.am/2026/03/25/1546303/) Կոնջորյանների, նրանց շուկայականից էժան արժեքով գնած առանձնատների մասին, վարչապետը զայրացավ, թե մակուլատուրան տպել, բերել եք, ինչ անեք, հանձնե՛ք իրավապահներին: Հանձնվեցին, իհարկե, դրանք իրավապահներին, սակայն որեւէ քայլ չարվեց, ավելին՝ կարճվեց գործը:

2022-ի հոկտեմբերի 8-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ սեպտեմբերի 25-ին Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքում անցկացված ՏԻՄ ընտրությունների օրը Ավետ Կոնջորյանը բավականին ագրեսիվ պահվածքով է աչքի ընկել, ոչ միայն անհարգալից է եղել ՔՊ-ի մրցակիցների, այլ նաեւ համայնք ժամանած եւ ընտրությունները դիտարկող անկախ դիտորդների նկատմամբ: Որեւէ արձագանք չեղավ այս հրապարակմանը (https://armlur.am/1217473/):

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՔՊ-ական պատգամավորների (որոշ բացառություններով նաեւ ընդդիմադիր) դիլիջանյան, ծաղկաձորյան սեմինարների համար վճարել է պետությունը՝ ընդ որում բավականին մեծ գումար. մոտ 630 հազար ԱՄՆ դոլար: Իհարկե, վերնագիրը վերապատրաստում, խորհրդատվություն, կարողությունների զարգացում է: Սովորաբար ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ/UNDP) աշխարհի տարբեր երկրներում պետական մարմիններին աջակցում է դրամաշնորհներով, տեխնիկական աջակցությամբ եւ փորձագիտական ռեսուրսներով: Հայաստանում, սակայն, գործում է նաեւ հակառակ ֆինանսական հոսքը. 2024 թվականի ֆինանսավորման համաձայնագրով ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը պարտավորվել է ՄԱԶԾ-ին հատկացնել 240,600,000 դրամ: Նույն հոդվածում վճարման ժամանակացույցն է՝ 25.12.2025 - 120,300,000 դրամ, 25.12.2026 - 120,300,000 դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է պարզել՝ ինչի համար է ՄԱԿ-ին ՀՀ Ազգային Ժողովը գումար փոխանցել, ինչ արդյունքներ պետք է ապահովի ծրագիրը, եւ որքանով է հիմնավորված պետական այդ ծախսը: Հարցմամբ դիմել ենք ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանին՝ պարզաբանելու 2026-ի ապրիլի 30-ին 114 մլն 765 հազար դրամի ֆինանսավորման իրավական հիմքը, ծրագրի բովանդակությունը, վճարվող ծառայությունները, մրցակցային ընթացակարգի առկայությունը, ինչպես նաեւ պետական միջոցների օգտագործման վերահսկողության մեխանիզմները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Գրիգորյանը նոր խորհրդարանում դարձյալ կլինի որպես պատգամավոր: Խորհրդարանում հազվադեպ ելույթներ ունեցող կամ օրինագծեր հեղինակող պատգամավորը փոխարենը պարբերաբար հայտնվում է ուշագրավ սկանդալների կենտրոնում: Հանրությունը նրան ճանաչեց Ազգային Ժողովում մի քանի հայտարարություններից ու պահվածքից հետո, մասնավորապես, երբ «սեպտեմբերի փոխարեն» ասաց «սեկտեմբեր» կամ երբ հայտարարեց, որ օրենքի նախագիծ է բերելու ԱԺ, որպեսզի «կաթը թանկանա»: Նա նաեւ խորհրդարանում պատգամավորների միջեւ տեղի ունեցած ծեծկռտուքների մեծ մասի ակտիվ մասնակիցներից է, հաճախ աչքի է ընկնում բռնության կադրերում, ընդդիմության պատգամավորների ելույթների ժամանակ ռեպլիկներ է բաց թողնում ու վեճ հրահրում, ինչից հետո թիմակիցները նրան կամ հանդարտեցնում են, կամ դահլիճից դուրս հանում: Նրա մասնակցությամբ ամենատպավորիչ սկանդալը թերեւս 2022 թվականին էր, երբ ԱԺ ամբիոնից գլուխ էր գովել, թե 44-օրյա պատերազմի օրերին եղել է «Գեղարքունիք» ջոկատի հրամանատար, եւ, իբր, իր մոտ են բերել ԱԺ փոխնախագահ Իշխան Սաղաթելյանի հորը՝ Վաչիկ Սաղաթելյանին, որն էլ, իբր, խնդրել է իրեն, թե հիվանդ է, թողնեն՝ գնա տուն, ինչից հետո ԱԺ-ում ծեծկռտուք էր սկսվել: ՀՀ պաշտպանության նախարարությունը հետագայում հերքել էր՝ պարզաբանելով, որ Նարեկ Գրիգորյանի գլխավորած «Գեղարքունիք» ջոկատն առաջնագծում չի եղել եւ մարտական որեւէ առաջադրանք չի կատարել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը քննարկել է փաստաբան Երեմ Սարգսյանի խախտված իրավունքների կապակցությամբ վերջինիս՝ 24.07.2026 թվականի դիմումը, ինչպես նաեւ ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի 27.07.2026 թվականի եզրակացությունը: Վերոգրյալի վերաբերյալ Պալատի խորհուրդը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, միաձայն որոշել է՝ դատապարտել փաստաբանական գաղտնիքի բացահայտման վտանգ պարունակող եւ փաստաբանի մասնագիտական անկախությանը միջամտելու հատկանիշներ ունեցող գործողությունները, մասնավորապես՝ 1) փաստաբան Երեմ Սարգսյանին՝ առանց օրենքով հստակ նախատեսված եւ պատշաճ հիմնավորված հիմքի, վարույթին մասնակցելուց ազատելը, 2) նույն վարույթով նրան որպես վկա հարցաքննության հրավիրելը, 3) նրանից փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը, 4) փաստաբանական գրասենյակի, բնակարանի, իրերի կամ տեղեկատվական կրիչների նկատմամբ այնպիսի գործողություններ նախատեսելը, որոնք կարող են հանգեցնել փաստաբանական գաղտնիքի բացահայտման:

⇨ *էջ 4*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆՈՐ ՈՒԺ ՍՏԵՂԾԵԼ ԵՎ ԲԱՐԵՓՈԽԵԼ ԱՄԵՆ ԻՆՉ»

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում ArmLur.am-ի բլից հարցերին պատասխանել է Պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ, «Միասնության թեւեր» կուսակցության խորհրդի անդամ Դավիթ Անանյանը:

- Ձեր կարծիքով՝ բիզնեսն այսօր ավելի շատ սիրո՞ւմ է իշխանությանը, թե՞ փախչում է նրանից:
- Իշխանությունից, ոչ թե պետությունից:
- Եթե ՊԵԿ-ը TikTok ունենար, ինչպիսի՞ հեշթեգ կընտրեիք:
- #Վճարեք:
- Հարկային համակարգը երբեւէ «բլոկե՞լ» է Ձեզ:
- Ոչ:
- Եթե քաղաքականությունը հարկվեր, դրույքաչափը քանի՞ տոկոս կլիներ:
- Մինուս 5 տոկոս:
- Ո՞րն է ավելի հեշտ՝ մարդկանց համոզել հարկ վճարե՞լ, թե՞ քվեարկել ձեր օգտին:
- Հարկ վճարել:
- Ձեր կարծիքով՝ մարդիկ ավելի շատ ինչի՞ց են վախենում՝ ՊԵԿ-ի՞ց, թե՞ ընտրություններից:
- ՊԵԿ-ից:
- Ո՞րն է ավելի դժվար՝ ղեկավարել հարկային համակարգը, թե՞ Facebook-ի մեկնաբանությունները:
- ՊԵԿ-ը:
- ՊԵԿ-ում ո՞ր բառն է ամենասարսափելին՝ «ստուգո՞ւմ», թե՞ «ներում»:
- Ստուգում:
- Հարկային վերահսկողությո՞ւն, թե՞ տնտեսական ազատություն:
- Տնտեսական ազատություն՝ չափի մեջ:
- ՊԵԿ ղեկավա՞ր, թե՞ քաղաքական գործիչ:
- Պրոֆեսիոնալ:
- Վստահությունը կառուցվո՞ւմ է, թե՞ վաստակվում:
- Վաստակվում է:
- Քաղաքականությո՞ւն, ծառայությո՞ւն, թե՞ պայքար:
- Ծառայություն:
- Նոր ուժ ստեղծե՞լ, թե՞ հինը բարեփոխել:
- Նոր ուժ ստեղծել եւ բարեփոխել ամեն ինչ:
- Պարտությո՞ւն, թե՞ ձախողում:
- Դաս:
- Հայաստանը՝ հնարավորությո՞ւն, թե՞ խնդիր:
- Հնարավորություն:
- Հանգի՞ստ, թե՞ աշխատանք:
- Աշխատանք: Միայն աշխատանք:
- Շնորհակալ եմ, պարոն Անանյան, հետաքրքիր զրույցի համար:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԹԵԺ ՕՐ ՔՊ–ՈՒՄ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ այսօր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունը հրավիրել է նիստ, որի ընթացքում պետք է քննարկվեն եւ հաստատվեն Ազգային Ժողովի 12 մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ նիստը վարելու է վարչապետ, ՔՊ վարչության նախագահ Նիկոլ Փաշինյանը: Ըստ նույն աղբյուրների՝ սպասվող քննարկումները լինելու են բավականին լարված, քանի որ որոշ հանձնաժողովների ղեկավարների հարցում կուսակցության ներսում առկա են տարբեր մոտեցումներ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ նիստում կարող են որոշվել նաեւ մի շարք գործող ՔՊ-ական պատգամավորների հետագա պաշտոնական ճակատագրերը: Մեր աղբյուրների պնդմամբ՝ որոշ պատգամավորներ մտահոգ սպասում են վարչության որոշումներին՝ հասկանալու համար՝ կպահպանեն արդյոք հանձնաժողովներում իրենց ազդեցիկ դիրքերը, թե՞ տեղի կունենան փոփոխություններ:

Հատկանշական է, որ ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները հայտնում են՝ Ալեն Սիմոնյանն արդեն տեղեկացրել է կուսակցության ղեկավարությանը, որ վարչության նիստին չի մասնակցելու: Ըստ մեր տեղեկությունների՝ Սիմոնյանը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չէ եւ մինչեւ օգոստոսի կեսը չի վերադառնա:

Մինչ այդ, ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ ԱՄՆ-ից արդեն վերադարձել է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, որը, ըստ իշխանական աղբյուրների, մասնակցելու է նիստին:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ այսօրվա նիստը կարող է դառնալ ՔՊ-ի ներքին վերադասավորումների հերթական կարեւոր փուլը: Թե ովքեր կստանան ԱԺ հանձնաժողովների նախագահի պաշտոնների համար իշխանության աջակցությունը, եւ արդյոք կլինեն անակնկալ փոփոխություններ, պարզ կդառնա արդեն առաջիկա ժամերին:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴ Է ԳՆՈՒՄ

ArmLur.am-ը կառավարության կայքից տեղեկացավ, որ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի որոշմամբ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանին կտրամադրվի ամենամյա արձակուրդի մի մասը:

Որոշման համաձայն՝ Էդուարդ Հակոբյանը 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի շրջանակում կգտնվի արձակուրդում 2026 թվականի հուլիսի 30-31-ը ներառյալ՝ 2 աշխատանքային օր տեւողությամբ:

Որոշմամբ նաեւ սահմանվել է, որ Էդուարդ Հակոբյանի արձակուրդի ընթացքում նրան կփոխարինի Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Վրեժ Մխիթարյանը:

ԸՆԴԳԾՎԵԼ Է

Փաշինյան-Պուտին հեռախոսազրույցի մասին հաղորդագրություն է տարածել Կրեմլի մամուլի ծառայությունը:

Հաղորդվում է, որ զրույցը տեղի է ունեցել հայկական կողմի նախաձեռնությամբ:

Վլադիմիր Պուտինը վերահաստատել է իր հավատարմությունը 2026 թվականի մայիսի 29-ին Աստանայում Եվրասիական տնտեսական միության գագաթնաժողովում Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Ռուսաստանի ղեկավարների կողմից ընդունված համատեղ հայտարարությանը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպական միությանն անդամակցելուն ուղղված քայլերին:

Մասնավորապես, ընդգծվել է, որ անհրաժեշտ է Հայաստանում հնարավորինս կարճ ժամկետում անցկացնել համազգային հանրաքվե՝ Եվրոպական միությանն անդամակցելու կամ Եվրասիական տնտեսական միության կազմում հետագա մնալու հարցով:

ՓՈԽԱՐԻՆԵԼՈ՞Ւ Է ՎԵՀԱՓԱՌԻՆ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 9-րդ գումարման անդրանիկ նիստին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի փոխարեն նիստերի դահլիճում աղոթք է հնչեցնելու Բալթյան երկրներում Հայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը: Արդյոք Վազգեն Սրբազանը նման հրավեր ստացել է ՀՀ ԱԺ-ից: Այս հարցի պատասխանն ստանալու համար ArmLur.am-ը դիմեց արքեպիսկոպոսին: «Ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ որեւէ մեկի կողմից որեւէ բան ես չեմ ստացել եւ որեւէ կապ չունեմ այդ ամբողջի հետ: Մարդիկ,ուղղակի, իրենք իրենցով գրում են. իրենց ցանկությունն է եւ ես չեմ կարող ոչինչ ասել: Այնպես, որ այդ գրվածքներն ինձ հետ որեւէ առնչություն չունեն»,- ասել է Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանն՝ մեզ բոլորիս ամենայն բարիք մաղթելով:

Տեղեկացնենք, որ առայսօր ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ՀՀ ԱԺ-ի կողմից հրավեր չի ստացել՝ ԱԺ-ի 9-րդ գումարման անդրանիկ նիստին ելույթ ունենալու եւ հայրապետական աղոթք հնչեցնելու համար:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՆԴԱՏՆԵՐԸ՝ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

2026 թվականի հուլիսի 27-ին կայացած նիստում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով Երեւանի քաղաքապետի արձանագրությունները՝ Երեւանի ավագանու անդամներ Մեսրոպ Մանուկյանի, Լեւոն Լեւոնյանի, Միքայել Խաչատրյանի եւ Նատալյա Սինորյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ արձանագրությունները եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով, կազմել է արձանագրություն, ըստ որի՝ «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու անդամների մանդատները տրվել են ընտրական ցուցակների հերթական հաջորդ թեկնածուներին:

Մասնավորապես, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից մանդատը տրվել է Կարապետ Արտուշի Վարդանյանին, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից՝ Գոհար Հարությունի Սաֆարյանին, Սերգեյ Վլադիմիրի Ապրեսյանին եւ Արթուր Ռազմիկի Մայիլյանին:

ԸՆԹԱՑՔ Է ՏՎԵԼ

ՀՀ գլխավոր դատախազությունն ընթացք է տվել՝ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի հրապարակմանը, ըստ որի՝ ինքը իր կյանքին ուղղված սպառնալիքներ է ստանում:

Աննա Հակոբյանը այսօր տեսանյութ էր հրապարակել, պնդում էր, որ իր կյանքին ուղղված սպառնալիքներ է ստանում, որ սպառնալիքներ սկսել է ստանալ ընտանեկան բռնության թեմայի մասին խոսելուց հետո:

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Վլադիմիր Պուտինը եւ Իլհամ Ալիեւը հեռախոսազրույց են ունեցել, որի ընթացքում քննարկել են երկկողմ եւ միջազգային օրակարգի հարցեր: Այս մասին հայտնել է Կրեմլի մամուլի ծառայությունը:

«Քննարկելով երկկողմ եւ միջազգային օրակարգի արդիական հարցերը՝ առաջնորդները նշել են ռուս-ադրբեջանական հարաբերությունների կառուցողական բնույթը, ինչպես նաեւ կառավարությունների եւ համապատասխան գերատեսչությունների միջեւ երկխոսության ակտիվացումը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ՊԱՏՐԱՍՏ ՉԵՆ ԲԱՑԵԼ

ՌԴ արտաքին հետախուզությունը հայտնում է, որ Եվրոպական շատ երկրներ արդեն ահազանգել են ԵՄ ղեկավարությանը, որ պատրաստ չեն բացել իրենց շուկաները Հայաստանի ապրանքների համար: Հետախուզությունը հայտնում է նաեւ, որ ԵՄ աճող տնտեսական խնդիրները նրան հնարավորություն չեն տա փոխհատուցել Երեւանին ԵԱՏՄ-ից դուրս գալու ծախսերը: «Բրյուսելը չպետք է հույս ունենա, որ «ԵԱՏՄ երկրները թույլ չեն տա, որ Երեւանի քաղաքական անձնակազմը խեղդվի, նրան կպահեն ջրի երեսին եւ կհովանավորեն նրա մարաթոնյան լողը դեպի ԵՄ»,-ասվում է ԱՀԾ մամուլի բյուրոյի հաղորդագրության մեջ»:

ԶԵԼԵՆՍԿԻՆ ՆՇԵԼ Է

Վլադիմիր Զելենսկին ներկայացրել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ իր հանդիպման հիմնական նպատակները: «Մեր գլխավոր առաջնահերթություններն են բալիստիկ հրթիռային պաշտպանությունը եւ Ամերիկայի հետ ռազմավարական համագործակցությունը», - գրել է նա X սոցիալական ցանցում: Երեքշաբթի օրը Սպիտակ տունը «ՌԻԱ Նովոստի»-ին հաստատել է Թրամփի առաջիկա հանդիպումները Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի, ինչպես նաեւ Զելենսկու հետ: Սպիտակ տան խոսնակը նշել է, որ Զելենսկու հետ հանդիպման ժամանակ կքննարկվի Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ խաղաղ կարգավորման հարցը:

ԲՈԼԻՎԻԱՆ ՈՂՋՈՒՆԵԼ Է

Բոլիվիայի Արտաքին հարաբերությունների նախարարությունը հաղորդագրություն է տարածել Հայաստանի եւ Բոլիվիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 34-ամյակի կապակցությամբ: Այս մասին հայտնում է Ուրուգվայում ՀՀ դեսպանությունը: «Բոլիվիայի Բազմազգ Պետությունը ողջունում է Հայաստանի Հանրապետությանը՝ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 34-ամյակի կապակցությամբ եւ վերահաստատում է իր հանձնառությունը՝ շարունակելու ամրապնդել երկխոսությունը, բարեկամությունն ու համագործակցությունն երկու երկրների միջեւ»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԻՆՉ Է ՀԱՅՏՆԻ

ՈՎ Է ՔՊ-ԱԿԱՆ ԱՎԵՏ ԿՈՆՋՈՐՅԱՆԸ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի անունը վերջին տարիներին մշտապես եղել է քաղաքական օրակարգի կենտրոնում: Սակայն նրա եղբոր՝ Ավետ Կոնջորյանի շուրջ կուտակված փաստերը եւս հանրային ուշադրության արժանի են:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է դատական ակտերը, բիզնես կապերը եւ վերջին քրեական վարույթների վերաբերյալ հրապարակային տվյալները՝ հասկանալու համար, թե ով է իշխող ուժի ազդեցիկ պատգամավորի եղբայրը եւ ինչ հարցեր են առաջանում նրա գործունեության շուրջ:

Դատվածություն՝ խարդախության հոդվածով

Ավետ Կոնջորյանի կենսագրության ամենաուշագրավ դրվագներից մեկը վերաբերում է 2010 թվականին կայացված դատավճռին: «Ժողովուրդ» օրաթերթը Դատական տեղեկատվական համակարգի տվյալներն էր հրապարակել, որ նա մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու համար:

2010 թվականի հունիսի 17-ին դատարանը նրան դատապարտել է 4 տարվա ազատազրկման, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով 3 տարվա փորձաշրջան:

Այս փաստը առանձնապես ուշագրավ է այն պատճառով, որ խոսքը ոչ թե վարչական խախտման, այլ առանձնապես խոշոր չափերի խարդախության մասին է, ինչը հանրային ընկալման մեջ լուրջ հարցեր է առաջացնում անձի հետագա բիզնես գործունեության վերաբերյալ:

Վարորդական իրավունքից զրկված վիճակում մեքենա վարելու գործը

Կոնջորյանի անունը կրկին հայտնվել է իրավապահների ուշադրության կենտրոնում արդեն 2025-2026 թվականներին:

Հրապարակված դատական նյութերի համաձայն՝ 2025 թվականի հուլիսին նա մեկ տարով զրկվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից: Սակայն նույն տարվա հոկտեմբերին, ըստ վարույթի նյութերի, նա կրկին վարել է ավտոմեքենա:

Դրա հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ, որը հետագայում քննվել է «համաձայնությամբ տուգանք» ընթացակարգով:

«Միլոն Ռիելթի» եւ հարյուր միլիոնների հետքը

Ավետ Կոնջորյանի բիզնես գործունեությունը եւս հետաքրքիր շերտ ունի:

Նա եղել է 2023 թվականին հիմնադրված «Միլոն Ռիելթի» ՍՊԸ-ի տնօրենը եւ այդ պաշտոնը զբաղեցրել մինչեւ 2026 թվականի հունվարի 5-ը:

Ընկերությունը կապվում է գործարար Բաբկեն Հովակիմյանի եւ «Միլոն Մայնինգ» ՍՊԸ-ի հետ: Հենց այստեղ է սկսվում ամենահետաքրքիր հատվածը:

Մամուլում հրապարակված տեղեկությունների համաձայն՝ Կոնջորյանը մասնակցել է Աբովյան համայնքի Առինջ բնակավայրում գտնվող հողամասի օտարման գործարքի ձեւակերպմանը, որի արժեքը կազմել է 541 միլիոն դրամ:

Ավետ Կոնջորյանի շուրջ հրապարակային փաստերը ձեւավորում են հակասական պատկեր.

դատվածություն՝ առանձնապես խոշոր չափերի խարդախության համար,

նոր քրեական վարույթ՝ վարորդական իրավունքից զրկված վիճակում մեքենա վարելու պատճառով,

կապեր խոշոր անշարժ գույքի գործարքների եւ բիզնես կառույցների հետ:

Մինչ իրավապահ մարմինները որեւէ նոր գնահատական չեն տվել նրա գործունեությանը, այս պատմությունը շարունակում է մնալ քաղաքական եւ հանրային հետաքրքրության կարեւոր թեմա՝ հատկապես այն պատճառով, որ այն առնչվում է Հայաստանի իշխող քաղաքական ուժի ամենաազդեցիկ դեմքերից մեկի ընտանիքին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՀՆԱՐ ԷՐ

ՀԱՊԿ-ի մասնակցությունը Ղարաբաղյան հակամարտությանն անհնար էր, հայտարարել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան: «ՀԱՊԿ-ի մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը անհնար էր, քանի որ նույնիսկ Հայաստանն ինքը չէր ճանաչում այդ տարածքը: Նման պայմաններում ՀԱՊԿ մեխանիզմը չէր կարող ակտիվացվել»,- նշել է նա:

ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Դեռեւս տարեսկզբին, նկատի ունենալով հանրության կողմից սննդամթերքի առաքման ծառայություններից ավելի հաճախ օգտվելու հանգամանքը, ինչպես նաեւ արձագանքելով քաղաքացիներից ստացվող բողոքների ու ահազանգերի մտահոգիչ քանակին, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը տեղեկացրել էր առաքում իրականացնող կազմակերպություններին, որ սկսելու է լայնածավալ վերահսկողություն այս դաշտում:

Հստակեցվել էր, որ առաքում իրականացնող անձանց նախնական ու պարբերական բժշկական զննության ենթարկված չլինելու եւ սանիտարական (բժշկական) գրքույկի բացակայության դեպքում վերջիններս կկրեն վարչական պատասխանատվություն. նրանց գործատուի պարտականությունն է ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում սննդամթերքի արտադրության եւ շրջանառության փուլերում սննդամթերքի հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցների բժշկական զննության ենթարկվելը:

Առաքում իրականացնող գործընկերկազմակերպությունների հետ կազմակերպված հանդիպման ընթացքում նրանք խնդրեցին տրամադրել ժամկետ իրենց առաքիչների (2-3 հազար) համար բուժզննության եւ սանիտարական (բժշկական) գրքույկի ձեռքբերման ամբողջական գործընթացն ավարտելու համար:

Ընդառաջելով խնդրանքին՝ տեսչական մարմնի կողմից սահմանվեց ողջամիտ ժամկետ:

2026թ. Օգոստոսի 1-ից Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ամբողջ ծավալով կիրացնի իրեն վերապահված վերահսկողական գործառույթը առաքում իրականացնողների նկատմամբ:

Տվյալ դեպքում կիրապարակվեն ոչ միայն խախտումները, այլեւ այն գործընկեր-կազմակերպությունների անունները, որոնք բարեխղճորեն կատարած կլինեն օրենքի պահաջը:

Ծանուցում. սննդի շղթայի ցանկացած փուլում (արտադրության, մշակման, վերամշակման, բաշխման, պահման, պահպանման, փոխադրման, ներմուծման, արտահանման եւ իրացման) ներգրավված անձնակազմը պետք է ենթարկվի նախնական (աշխատանքի ընդունվելիս) եւ պարբերական (յուրաքանչյուր կիսամյակ) բժշկական զննությունների եւ ունենա անձնական սանիտարական (բժշկական) գրքույկ:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Իսրայելական բանակը սպանել է «ՀԱՄԱՍ»-ի ներքին անվտանգության ծառայության ղեկավարին Գազայի կենտրոնական հատվածում, հայտնել է բանակի մամուլի ծառայությունը:

«Իսրայելի պաշտպանության ուժերը ավիահարված են հասցրել Դեյր էլ-Բալահ տարածքում եւ սպանել Վաիլ Մուսա Խալեդ Լադհավիին՝ «ՀԱՄԱՍ»-ի ներքին անվտանգության ծառայության ղեկավարին Գազայի կենտրոնական հատվածում», - ասվում է հայտարարության մեջ:

Ըստ հայտարարության՝ «Լադհավիի հրամանատարության ներքո այս մարմինը հետախուզական տվյալներ է հավաքել «ՀԱՄԱՍ»-ի բարձրաստիճան հրամանատարների համար՝ աջակցելով նրանց որոշումների կայացմանը եւ նպաստելով Իսրայելի պետության դեմ ահաբեկչական հարձակումների պլանավորմանն ու իրականացմանը»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը քննարկել է փաստաբան Երեմ Սարգսյանի խախտված իրավունքների կապակցությամբ վերջինիս՝ 24.07.2026 թվականի դիմումը, ինչպես նաեւ ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի 27.07.2026 թվականի եզրակացությունը:

Վերոգրյալի վերաբերյալ Պալատի խորհուրդը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, միաձայն որոշել է՝

Դատապարտել

փաստաբանական գաղտնիքի բացահայտման վտանգ պարունակող եւ փաստաբանի մասնագիտական անկախությանը միջամտելու հատկանիշներ ունեցող գործողությունները, մասնավորապես՝

1) փաստաբան Երեմ Սարգսյանին՝ առանց օրենքով հստակ նախատեսված եւ պատշաճ հիմնավորված հիմքի, վարույթին մասնակցելուց ազատելը,

2) նույն վարույթով նրան որպես վկա հարցաքննության հրավիրելը,

3) նրանից փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը,

4) փաստաբանական գրասենյակի, բնակարանի, իրերի կամ տեղեկատվական կրիչների նկատմամբ այնպիսի գործողություններ նախատեսելը, որոնք կարող են հանգեցնել փաստաբանական գաղտնիքի բացահայտման:

Հորդորել

քրեական վարույթն իրականացնող մարմնին՝

1) անհապաղ վերանայել փաստաբան Երեմ Սարգսյանին վարույթին մասնակցելուց ազատելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը,

2) ձեռնպահ մնալ փաստաբանին այն հանգամանքների վերաբերյալ հարցաքննելուց, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ այդպիսի օգնության համար իրեն դիմելու կապակցությամբ,

3) զերծ մնալ փաստաբանական գրասենյակը, փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը, իրերը կամ թվային կրիչները խուզարկելուց, առգրավելուց կամ այլ կերպ ուսումնասիրելուց, եթե գործողությունը վերաբերում է փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքներին,

4) ապահովել փաստաբանական գաղտնիք պարունակող փաստաթղթերի, թվային տվյալների եւ հաղորդակցության լիարժեք անձեռնմխելիությունը,

5) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը վերականգնելու եւ արդյունավետորեն ապահովելու համար,

6) ապահովել առնվազն հանրային հաշվետվողականության այնպիսի մակարդակ, որը՝ չվնասելով նախաքննության օրինական շահերին, կփարատի փաստաբանական համայնքի եւ հանրության հիմնավոր մտահոգությունները:

Կոչ անել

ՀՀ դատախազությանը՝ իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում պատշաճ վերահսկողություն իրականացնել փաստաբանի իրավունքներին, փաստաբանական գաղտնիքին եւ պաշտպանության իրավունքին միջամտող գործողությունների օրինականության նկատմամբ,

Մարդու իրավունքների պաշտպանին, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող ազգային եւ միջազգային կազմակերպություններին, ինչպես նաեւ Հայաստանի միջազգային գործընկերներին՝ ուշադրության ներքո պահել ստեղծված իրավիճակը՝ ակնկալելով համապատասխան արձագանք եւ աջակցություն նման դեպքերի կրկնությունը կանխելու նպատակով:

Խորհուրդը շարունակելու է հետեւել զարգացումներին եւ իր իրավասության շրջանակներում ձեռնարկել փաստաբանի անկախության, փաստաբանական գաղտնիքի եւ արդյունավետ պաշտպանության իրավունքի պահպանմանն ուղղված միջոցներ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ Պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության (կանխարգելման ազգային մեխանիզմ) ներկայացուցիչները հուլիսի 24-ին մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մասիսի եւ Արտաշատի բաժինների ձերբակալվածների պահման վայրեր: Այս մասին հայտնում է Պաշտպանի գրասենյակը:

«Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները ծանոթացել են ազատությունից զրկված անձանց պահման պայմաններին, նրանց իրավունքների ապահովման վիճակին եւ դրանց համապատասխանությանը սահմանված չափանիշներին:

Առանձնազրույցներ են անցկացվել մի շարք կալանավորված եւ ձերբակալված անձանց հետ: Ուսումնասիրվել են նաեւ ազատությունից զրկված անձանց սննդի, բժշկական օգնության եւ սպասարկման ապահովման, արտաքին աշխարհի հետ կապի, ինչպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարեւոր այլ հարցեր:

Մշտադիտարկումների շրջանակներում չհայտարարված այցեր են իրականացվել նաեւ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի եւ Մասիսի նստավայրեր:

Մշտադիտարկման այցի ընթացքում ուսումնասիրվել են դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցերի պայմանները, կահավորանքը, սանիտարահիգիենիկ վիճակը, ազատությունից զրկված անձանց սննդով ապահովման եւ իրավաբանական օգնության կազմակերպումը, ինչպես նաեւ՝ վերջիններիս իրավունքների իրացմանն առնչվող այլ հարցեր:

Չհայտարարված այցի արդյունքները կամփոփվեն եւ խնդիրները՝ համապատասխան լուծումների առաջարկներով, կհասցեագրվեն իրավասու մարմիններին՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նպատակով»,-ասված է հաղորդագրության մեջ:

ՊԼԱՍՏՄԱՍԵ ԽՈՂՈՎԱԿՈՎ

Հուլիսի 18-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 19:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մարտունու բաժին է դիմել Արարատի մարզի բնակիչ 32-ամյա մի կին եւ հայտնել, որ հուլիսի 15-ին իր ամուսինը անձնական հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ Մադինա բնակավայրի սարատեղիում պլաստմասե խողովակով մի քանի անգամ հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ ոտքերի շրջանում պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, այդ կինը ոստիկաններին հայտնել է նաեւ, որ նույն օրը՝ վերը նշված դեպքից հետո, ժամը 23:30-ի սահմաններում, ամուսինը իր կամքին հակառակ, բռնություն գործադրելով, սեռական հարաբերություն է ունեցել իր հետ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողները ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում ամուսնուն հայտնաբերել, ձերբակալել եւ կազմված փաստաթղթերի հետ միասին ներկայացրել են ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ՀԱՐԿԵՐ Է ԹԱՔՑՐԵԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության երկրորդ բաժնում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ Երեւան-Սեւան մայրուղում գործող, վառելիքի մանրածախ առեւտրով զբաղվող ընկերությունը՝ գործունեության արդյունքում իրացումից ստացված հասույթներն ամբողջությամբ չի արտացոլում հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում:

ՀՕՀ վարչության աշխատակիցները ձեռնարկել եւ իրականացրել են ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Ընկերության գազալցակայաններում տեղադրված լիցքավորման աշտարակներից դուրս են բերվել եւ հետազոտվել են իրացման վերաբերյալ տվյալները: Միաժամանակ ուսումնասիրվել են նաեւ վաճառքի հաշվառման մատյաններն ու սեւագիր գրառումներ պարունակող տետրերը: Ձեռք բերված տվյալները համադրվել են ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա նույն ժամանակաշրջանների վերաբերյալ հարկային հաշվարկների տվյալների հետ: Պարզվել է, որ ընկերության կողմից 2022-2026 թթ-ին սեղմած բնական գազի, հեղուկ գազի, բենզինի եւ դիզելային վառելիքի վաճառքների մասով թերհայտարարագրվել է շուրջ 600 մլն դրամի իրացման շրջանառություն: Արդյունքում չի հաշվարկվել եւ պետական բյուջե չի վճարվել շուրջ 210 մլն ՀՀ դրամ: Նշված փաստի առթիվ առերեւույթ հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը շարունակում է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել ոչ միայն կատարված հանցագործությունների բացահայտման, այլեւ դրանք կանխելու ուղղությամբ, միաժամանակ հորդորում է տնտեսվարող սուբյեկտներին զերծ մնալ նման արատավոր վարքագծից եւ չկատարել ապօրինություններ, իսկ գնորդներին պարտադիր տրամադրել ՀԴՄ կտրոններ կամ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվարկային փաստաթղթեր:

ԿՏԵՂԱՓՈԽՎԻ

Արագածոտնի մարզի Մելիքգյուղում մորը դաժանաբար սպանելու մեջ մեղադրվող 20-ամյա տղան կտեղափոխվի հոգեբուժարան: Քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով (սպանությունը, որը կատարվել է մերձավոր ազգականի կողմից): Հաշվի առնելով քրեական վարույթում առկա փաստական տվյալները, նրա նկատմամբ անվտանգության միջոց՝ բժշկական հսկողություն կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվել դատարան, որը դատարանը բավարարել է:

● *Հուլիսի 20-ից 27-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու 10 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴԵՌ ՉԻ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

Հունիսի 19-20-ը տեղացած կարկուտը մեծ վնասներ է հասցրել Տավուշի մարզի սահմանամերձ Ոսկեպար, Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր, Ոսկեվան, Կոթի, Բաղանիս, Ջուջեւան գյուղերին: Խոշոր, հավի ձվի չափ, անկանոն տեսքով, ելուստներով կարկտահատիկներն ավերել են բանջարանոցներ, այգիներ, խաղողի վազեր, ծակել տների, անասնագոմերի, տներին կից սարայների ու այլ շինությունների ասբոշիֆերյա ծածկեր, վնասել դրսում կայանած ավտոմեքենաներ: Կարկուտը վնասել է Ոսկեպարի 3 ընտանիքներին պատկանող արեւային կայանները: Կիրանցին կից Աճարկուտ գյուղի ռեստորանային համալիրում կայացած հարսանիքի մասնակիցների տասնյակ ավտոմեքենաներ կարկտից վնասվել են: Իջեւանի ու Նոյեմբերյանի համայնքապետարանների հանձնաժողովները կարկտահարությունից տուժած գյուղացիների դիմումների հիման վրա տեղերում հաշվարկել են կարկտահարության պատճառած վնասները, այդ տվյալները ներկայացրել Տավուշի մարզպետարան: Հուլիսի 15-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Որքա՞ն է գնահատված, հաշվարկված Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում հունիսի 19-20-ին կարկտահարության պատճառած վնասները: Կառավարությունը նախատեսո՞ւմ է կարկտահարությունից տուժածներին ցուցաբերել օգնություն, եթե այո, ե՞րբ, ի՞նչ ձեւով»: ՏԿԵ նախարարության գլխավոր քարտուղար Արթուր Երիցյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «2026թ. հունիսի 19-20-ը Իջեւան եւ Նոյեմբերյան համայնքում կարկտահարության վնասների հետ կապված բնակիչների դիմումների հիման վրա, արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, վնասները հաշվառվել եւ ներկայացվել են հանրապետական հանձնաժողովի քննարկմանը: Արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում եւ հրապարակում է արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ վարչապետի 23.06.2026թ.N 547-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ 2026թ. կարկտահարության դեպքերի ուսումնասիրության, դրանց անկանոն (անոմալ) լինելու հիմնավորվածության, արդյունքում հասցված վնասների քանակական եւ ֆինանսական ցուցանիշների, ինչպես նաեւ կարկտահարության վայրերում կամ դրանց մոտակայքում կարկուտ տեղալուց առաջ կամ դրանց ընթացքում հակակարկտային կայանների գործադրման եւ դրա ազդեցության գնահատման նպատակով»: Տավուշի գյուղերում կարկտահարություններից անցել է մեկ ամիս եւ մեկ շաբաթ, սակայն հանրապետական հանձնաժողովը դեռ չի ամփոփել, հրապարակել կարկտահարությունների պատճառած վնասների չափերը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻԱՅՆ ՄԱՐԴԻԿ ԵՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ

ՍՏԵՂԾԵԼ ԵՆ ԱԲ-Ի ԴԵՄ ՏԱՌԱՏԵՍԱԿ

Արհեստական բանականության համակարգերից հաղորդագրությունները թաքցնելու նպատակով մշակվել է նոր՝ Ghost Font անվամբ տառատեսակը, որի հեղինակն է ծրագրավորող Էրիկ Լուն: Այն հաղորդագրությունները ներկայացնում է ոչ թե սպասիկ տեքստով, այլ շարժվող կետերի միջոցով, ինչը, հեղինակի խոսքով, մարդու աչքի համար ընթեռնելի է, սակայն դժվար է վերծանել արհեստական բանականության ներկայիս մոդելների համար:



Լուի խոսքով՝ Ghost Font-ը ոգեշնչված է 2013 թվականին ստեղծված ZXX տառատեսակից, որը նախատեսված էր օպտիկական նիշերի ճանաչման ծրագրերից պաշտպանվելու համար: Սակայն, քանի որ ժամանակակից արհեստական բանականությունը կարողանում է կարդալ ZXX-ով գրված տեքստը, նոր տարբերակում կիրառվել են շարժում, աղմուկ եւ խայծային հաղորդագրություններ:

Փորձարկումների ընթացքում մի շարք առաջատար արհեստական բանականության մոդելներ դժվարացել են վերծանել Ghost Font-ով ստեղծված հաղորդագրությունները: Բացի այդ, տեսանյութի մեկ կադրից հնարավոր չէ հասկանալ, թե ինչ հաղորդագրություն է թաքնված, իսկ խայծային տեքստը կարող է մոլորեցնել որոշ մոդելների:

Հեղինակը կարծում է, որ տեխնոլոգիան ապագայում կարող է կիրառվել նաեւ CAPTCHA համակարգերում՝ ավտոմատացված բոտերից պաշտպանվելու համար: Միեւնույն ժամանակ նա ընդունում է, որ արհեստական բանականության արագ զարգացումը կարող է ժամանակի ընթացքում նվազեցնել այս մեթոդի արդյունավետությունը:

Ghost Font-ը սոցիալական ցանցերում արդեն փորձարկվել է օգտատերերի կողմից՝ ստանալով ինչպես դրական, այնպես էլ թերահավատ արձագանքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ Է

Ճապոնիայի վարչապետ Սանաե Տակաիչին պատրաստ է անձամբ բանակցություններ վարել Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընի հետ՝ երկու երկրների միջեւ առկա տարաձայնությունները լուծելու համար: Նա այս մասին հայտարարել է մամուլի ասուլիսում:

Խոսելով 1970-ականներին Հյուսիսային Կորեայի հետախուզության կողմից առեւանգված ճապոնացի քաղաքացիների հարցի մասին՝ Տակաիչին վերահաստատել է այն լուծելու իր ցանկությունը՝ վարչապետի պաշտոնում իր պաշտոնավարման ընթացքում:

«Ես հստակ հասկանում եմ, որ ժամանակ կորցնելու կարիք չկա: Ես ուզում եմ առաջընթացի հասնել իմ պաշտոնավարման ընթացքում եւ լուծել այս հարցը ցանկացած գնով: Այս վճռականությամբ, առանց բացառելու որեւէ տարբերակ, այդ թվում՝ նախագահ Կիմ Չեն Ընի հետ հանդիպումը, ես մտադիր եմ շարունակել իմ ջանքերը՝ հարցը հնարավորինս արագ լուծելու համար», - ընդգծել է նա:

Տակաիչին մի քանի անգամ հայտարարել է Կիմ Չեն Ընի հետ անձնական բանակցություններ վարելու իր պատրաստակամության մասին, այդ թվում՝ 2025 թվականի վերջին վարչապետ ընտրվելուց անմիջապես հետո:

Առեւանգված քաղաքացիների հարցը ամենազգայուններից մեկն է երկու երկրների միջեւ հարաբերություններում, որոնք դիվանագիտական կապեր չեն պահպանում: 2002 թվականին Փհենյանը նախ ընդունեց 13 ճապոնացի քաղաքացիների առեւանգումը եւ թույլ տվեց նրանցից հինգին վերադառնալ տուն: Մնացածը հայտարարվեցին մահացած, իսկ նրանց մասունքները, որոնց իսկությունը հնարավոր չէր հաստատել, ուղարկվեցին նրանց ընտանիքներին: 2014 թվականի մայիսին երկու կառավարությունները համաձայնեցին նոր հետաքննություն անցկացնել ճապոնացի քաղաքացիների առեւանգումների վերաբերյալ, սակայն դրա համար պատասխանատու հանձնաժողովը հետագայում լուծարվեց Փհենյանի նախաձեռնությամբ:

2025 թվականի մարտի 26-ին Հյուսիսային Կորեայի առաջնորդի քույրը՝ Կիմ Յո Ջոնգը հայտարարեց, որ Փհենյանը հրաժարվում է Տոկիոյի հետ ցանկացած բանակցություններից: Նա ընդգծեց, որ իր երկիրը նույնպես հետաքրքրված չէ Կիմ Չեն Ընի եւ այն ժամանակվա Ճապոնիայի վարչապետ Ֆումիո Կիսիդայի միջեւ հանդիպում կազմակերպելով՝ առեւանգված քաղաքացիների հարցի վերաբերյալ Տոկիոյի դիրքորոշման պատճառով: Կիմ Յո Ջոնգը նշել է, որ Ճապոնիան փորձում է «կասկածի տակ դնել Հյուսիսային Կորեայի ինքնիշխանությունը»:

ԿԱՆԽԵԼ Է ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

Ռոսսելխոզնադզորը Բելառուսի տարածքով ՌԴ ներմուծման փորձի ժամանակ կանգնեցրել է Հայաստանից բերված ավելի քան 39 հազար թարմ կտրված վարդերի խմբաքանակ՝ կեղծ փաստաթղթերով: Այս ապրանքի մատակարարումների սահմանափակումները գործում են ընթացիկ տարվա մայիսի 22-ից: Հայտարարել են կազմակերպության մամուլի ծառայությունից:

Գերատեսչության հաղորդմամբ՝ Սմոլենսկի մաքսատանը կանգնեցվել է ավտոմեքենա, որը տեղափոխում էր Ռուսաստան ներմուծման համար արգելված 39,2 հազար ծաղիկ:

«Տվյալ խմբաքանակը տեղափոխող տրանսպորտային միջոցը՝ Բելառուսի քաղաքացու կառավարմամբ, Մինսկի մարզից ուղեւորվում էր Մոսկվա: Միաժամանակ ուղեկցող փաստաթղթերում բեռը նշված էր որպես ոչ ալկոհոլային տոնուսավորող ըմպելիքներ»,-ասվում է հաղորդագրությունում:

Ստուգման ընթացքում բեռնատարի հատվածում հայտնաբերվել են ծաղիկներ, որոնց համար չեն եղել բուսասանիտարական եւ ապրանքաուղեկցող փաստաթղթեր: Պահպանված մակնշման պիտակների հատվածներում նշված է եղել դրանց հայկական ծագումը:

Հայաստանից ՌԴ ծաղիկների մատակարարումը, ինչպես նաեւ դրանց տարանցումը Ռուսաստանի տարածքով արգելված են 2026 թվականի մայիսի 22-ից: Հունիսի 12-ից գործում է Հայաստանից ծագող եւ Հայաստանից ուղարկվող բոլոր կարանտինային ենթակա ապրանքների ներմուծման սահմանափակում:

Ռոսսելխոզնադզորը նշել է, որ սահմանափակումները մտցվել են՝ ՌԴ տարածք վտանգավոր կարանտինային օբյեկտների ներթափանցումը կանխելու նպատակով:

Գերատեսչության տարածքային վարչության որոշմամբ՝ մաքսանենգ ճանապարհով տեղափոխվող վարդերի խմբաքանակը ոչնչացվել է հուլիսի 23-ին: Փոխադրողը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

● *Հուլիսի 20-ից 27-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են տեխնիկական զննություն չանցած 85 դեպք:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԻՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Տարածաշրջանային եւ գլոբալ իրադարձությունները կորպորատիվ բիզնեսի կառավարման նոր լուծումներ են պահանջում: Ո՞ր ոլորտներն առաջնային ունեն ֆինանսաբանկային համակարգի օժանդակությունն այսօր եւ ի՞նչ եղանակով է Ֆասթ Բանկը փակում այդ պահանջարկը. այդ մասին կխոսենք Ֆասթ Բանկի կորպորատիվ բիզնես կառավարման տնօրեն Տիգրան Մխիթարյանի հետ:

- Պարոն Մխիթարյան, որո՞նք են ներկայումս տնտեսության այն առաջնային ուղղություններն ու թիրախային ոլորտները, որոնք պահանջարկ են ձեւավորում եւ ակտիվ են վարկավորման տեսանկյունից:

- Մենք եւ՛ վարկավորում ենք, եւ՛ սպասարկում ենք Հայաստանի հանրապետության գրեթե բոլոր ոլորտները՝ սկսած արտադրությունից, արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից, ներառյալ առեւտուրը՝ միջազգային եւ տեղական առեւտուրը, ինչպես նաեւ ներկա ժամանակներում շատ վերելք ապրող առողջապահության ոլորտը: Մեր հիմնական թիրախներից մեկն էլ լիզինգի գործիքի կիրառումն է Հայաստանի հանրապետությունում: Բիզնեսների վարկավորման տեսակետից մենք շատ արագ ենք, մենք շատ ճկուն ենք եւ հարաբերությունները մեր գործընկեր-հաճախորդների հետ ստեղծում ենք թափանցիկության եւ երկարաժամկետության հիման վրա:

- Ի՞նչ առանցքային ձեռբերումներ ունի Ֆասթ Բանկի կորպորատիվ բիզնես կառավարման բլոկն այս տարում եւ ի՞նչ նոր նախագծերի վրա եք աշխատում հիմա:

- Այս տարին բավականին խոստումնալից է սկսել, մենք հասցրել ենք մեր պորտֆելն արդեն 120 միլիարդ դրամի, որը դեռ ամենը չէ, եւ շարունակում ենք աճել:

Այս տարվա նախագծերից կուզենայի շեշտել Ֆասթ Բանկի մասնակցությունը Հայաստանում առաջին եւ ամենախոշոր սինդիկացված վարկին, բոլորդ տեղյակ եք Firebird AI-ի ֆինանսավորման մասին, որին Բանկն իր մասնակցությունն է ունեցել: Այս տարի մեծացրել եւ լայնացրել ենք մեր գործընկեր-հաճախորդների համայնքը, որը հիմնված է ավելի թափանցիկ հարաբերությունների վրա, եւ որպես հարաբերությունների հիմք վերցված են ավելի երկարաժամկետ եւ փոխըմբռման սկզբունքները:

Ներկա պահին, բացի նշված նախագծից, մենք նույնպես ֆինանսավորում ենք միջազգային նախագծերի ներդրումը՝ այսպես կոչված միջազգային կապիտալի ներհոսքը դեպի Հայաստան եւ մեր բոլոր տեսակի ծառայությունների մատուցումն ենք առաջարկում միջազգային կազմակերպություններին, որոնք պատրաստակամություն են ցուցաբերում Հայաստանում ներդրումներ իրականացնել:

Ներկա տարում պլանավորում ենք ստեղծել կորպորատիվ առանձնացրած մասնաճյուղ, որտեղ մեր հաճախորդները, մեր գործընկերները կստանան ավելի անհատականացված մոտեցում, եւ տվյալ մասնաճյուղի աշխատակիցները վերապատրաստված կլինեն կորպորատիվ հաճախորդների սպասարկման ոլորտում եւ կունենան նեղ մասնագիտացված գիտելիքներ:

- Պարոն Մխիթարյան, Դուք անդրադարձաք միջազգային շուկային, ճի՞շտ ենք հասկանում, որ Բանկի օրակարգում այսօր դրված է նաեւ արտաքին շուկաներ դուրս գալու եւ ինտեգրվելու խնդիր:

- Շատ ճիշտ եք նկատել, Ֆասթ բրենդը ծանոթ է ոչ միայն Հայաստանում, այլեւ Միացյալ Թագավորությունում: Մենք այնտեղ ունենք մեր առանձնացված Ֆասթ Կրեդիտ կապիտալը եւ մեր առաքելությունն է, որպեսզի մենք ոչ միայն ծառայություններ մատուցենք Հայաստանի հանրապետության տարածքում, այլ նաեւ միջազգային շուկայում: Այս տարի շատ յուրահատուկ տարի էր նման նախագծերի շրջանակում, քանի որ մենք այս տարի բանակցություններ ենք վարում մեր միջազգային ֆինանսական կառույցների հետ, որպեսզի հարաբերություններն ավելի խորացնենք եւ կարողանանք տրամադրել մեր գործընկեր հաճախորդներին ավելի արդյունավետ եւ ավելի հարմարավետ պայմաններով միջազգային ռեսուրսներ, որոնց հիման վրա կզարգանա Հայաստանի հանրապետությունում ներդրումների քանակը: Ինչպես նաեւ միջազգային առեւտրով զբաղվող մեր գործընկերներին կարողանալու ենք տրամադրել ավելի ճկուն, ավելի արդյունավետ, ավելի հարմար պայմաններով միջազգային առեւտուրը սպասարկող գործիքակազմ, ինչպիսիք են միջազգային ակրեդիտիվները եւ միջազգային երաշխիքները:

- Պարոն Մխիթարյան, տարածաշրջանային եւ գլոբալ իրադարձությունները փոփոխում են տնտեսության խաղի կանոնները, Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ ազդեցություն կարող են թողնել այդ իրողությունները կորպորատիվ բիզնես ոլորտում, եւ արդյո՞ք բանկային համակարգը պատրաստ է բավարարել նոր ձեւավորվող պահանջները:

- Հայաստանի բանկային համակարգն արդեն երկար տարիներ ցույց է տվել, որ շատ կայուն է, անկախ այն հանգամանքից, որ մեզ շրջապատող աշխարհը ներկա պահին շատ անկայուն է: Մենք անցել ենք Քովիդ, անցել ենք 44-օրյա պատերազմ, սակայն եւ՛ բանկային համակարգը, եւ՛ մեր հաճախորդները, բիզնես գործընկերները ցուցաբերել են կայունություն: Եւ եթե նույնիսկ վերցնենք վարկային պորտֆելը կամ ավանդային պորտֆելը, կտեսնենք, որ տատանումներ տեղի չեն ունեցել, եւ միշտ գրանցվել է կայուն աճ եւ կայուն պորտֆելի որակ: Այս իրողությունից ելնելով՝ ներկա տնտեսական իրավիճակում եւ ներկա միջազգային իրավիճակում, որտեղ մեր հարեւան երկրներում կան որոշակի ընդվզումներ, մեր բիզնեսներն ավելի կայուն աճ են ցուցաբերելու: Իմ կարծիքով սա ավելի նոր մոտեցումների, նոր շուկաների ձեւավորման եւ նոր միջազգային գործիքակազմի ներթափանցման՝ դեպի Հայաստան, առավելություն է, քան որոշակի ռիսկեր:

- Ինչպե՞ս են Ֆասթ Բանկում կառուցում երկարաժամկետ հարաբերություններ կորպորատիվ հաճախորդների հետ:

- Ֆասթ Բանկում կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունները կառուցվում են, ինչպես նշել էի, երկարաժամկետ համագործակցության սկզբունքներով: Մենք մեր հարաբերությունները կազմակերպում եւ կառուցում ենք մեր հաճախորդների հետ թափանցիկության սկզբունքների հիման վրա, չունենք ընդհանրապես թաքնված միջնորդավճարներ, թաքնված այլ ծախսեր, որը հաճախորդը կրում է: Բոլոր հարաբերությունները կառուցվում են հիմնականում թափանցիկության, երկարաժամկետ սկզբունքներով, եւ ցանկացած հարաբերության սկզբում փորձում ենք ծածկել հաճախորդի պահանջարկի ողջ սպեկտրը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

Մամուլի ծառայություն
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
էլ. փոստ՝ press@fcc.am

ԲԱՆԿԵՐ

ԹԻՎ 1 ՀԱՐԿԱՏՈՒՆ Է ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ

Արդշինբանկը Հայաստանի թիվ 1 հարկատուն է ուղղակի հարկերի գծով եւ առաջին եռյակում է երկրի խոշորագույն հարկատուների շարքում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) 2026 թվականի առաջին կիսամյակի հրապարակած ցուցանիշներով:

Բանկն ուղղակի հարկերի գծով վճարել է պետական բյուջե 32,5 մլրդ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր հարկային վճարումների ծավալը կազմել է 33,6 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում (հունվար-հունիս) բանկի կողմից վճարված գումարներից 27,5 մլրդ ՀՀ դրամը կազմել է շահութահարկը, իսկ շուրջ 5,0 մլրդ ՀՀ դրամը՝ եկամտային հարկը:

Բանկի արձանագրած այս ցուցանիշները վկայում են ոչ միայն ֆինանսական կայունության, այլեւ երկրի տնտեսական զարգացման գործընթացներում Արդշինբանկի շարունակական եւ պատասխանատու մասնակցության մասին:

«Արդշինբանկը դիտարկում է իր առաքելությունը ոչ միայն որպես ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություն, այլեւ որպես Հայաստանի տնտեսության զարգացման կարեւոր գործընկեր: Մեր կողմից պետբյուջե կատարվող վճարումների շարունակական աճը մեր գործունեության մասշտաբի եւ տնտեսության տարբեր ոլորտներին աջակցության արտահայտությունն է: Մենք շարունակելու ենք ներդրում ունենալ բիզնեսի զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման եւ երկրի տնտեսական ներուժի ընդլայնման գործում»,- նշել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության անդամ, ֆինանսական տնօրեն Գարեգին Գեւորգյանը:

Արդշինբանկի արձանագրած արդյունքները եւս մեկ անգամ ընդգծում են բանկի դերը՝ որպես Հայաստանի տնտեսական առաջընթացին նպաստող առանցքային ֆինանսական կազմակերպության:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՎԱՐՏԵԼ Է

Բանկը ժամկետից շուտ ավարտել է 5մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով դոլարային պարտատոմսերի հերթական տրանշի տեղաբաշխման գործընթացը:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը 5% է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս, իսկ պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ 09.07.2029թ.:

Պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման Հայաստանի ֆոնդային բորսայում եւ գնանշվելու են շուկա ստեղծողի (Marketmaker) կողմից:

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը եւ մարումն իրականացվելու է հետեւյալ ժամանակացույցով՝

1-ին վճարում - 09.01.2027թ.
2-րդ վճարում - 09.07.2027թ.
3-րդ վճարում - 09.01.2028 թ.
4-րդ վճարում - 09.07.2028թ.

5-րդ վճարում - 09.01.2029թ.
6-րդ վճարում եւ անվանական արժեքի մարում - 09.07.2029թ.:

Հիշեցնենք, որ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հուլիսի 28-ին կայացած մամուլի ասուլիսում Ամերիաբանկի մանրածախ բանկինգի գծով տնօրեն Արման Բարսեղյանը ներկայացրել է մանրածախ բանկինգի ոլորտում 2026թ. I կիսամյակի, ինչպես նաեւ վերջին տարիներին գրանցած արդյունքները, հիմնական ձեռքբերումները, զարգացման առաջնահերթությունները, առաջիկա ծրագրերը:

Բարսեղյանը նշել է, որ Ամերիաբանկի հաճախորդների թիվը հատել է 900 հազարի շեմը: Ընդգծենք, որ Ամերիաբանկի հաճախորդների բազայի միջին աճի տեմպը վերջին 5 տարվա ընթացքում կազմել է 23.41%, իսկ վերջին երկու տարում հաճախորդների բազան կրկնապատկվել է:

Հաճախորդների բազայի ընդլայնմանը զուգահեռ՝ առաջանցիկ տեմպով աճել է նաեւ հաճախորդների թվային ակտիվությունը, մասնավորապես, վերջին 5 տարում թվային տիրույթում ամսական ակտիվ օգտատերերի աճի միջին տեմպը կազմել է 55.81%:

30.06.2026թ. դրությամբ Ամերիաբանկի մանրածախ բանկինգի գծով ավանդների պորտֆելը գերազանցել է 1 տրիլիոն 30 մլրդ ՀՀ դրամը: Ընդ որում, ժամկետային ավանդների պորտֆելը տարեսկզբից աճել է 19%-ով՝ կազմելով 423 մլրդ դրամ, իսկ ցպահանջ ավանդների պորտֆելն աճել է 18%-ով՝ հասնելով 446 մլրդ դրամի (30.06.2026թ. դրությամբ):

Ամերիաբանկի մանրածախ վարկային պորտֆելը տարեսկզբից ավելացել է ավելի քան 10%-ով եւ 30.06.2026թ. դրությամբ գերազանցել 800 մլրդ դրամը, այդ թվում 12%-ով աճել է հիփոթեքային վարկերի պորտֆելը՝ գերազանցելով 400 մլրդ դրամը:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Ամերիաբանկի պարտատոմսերի պորտֆելը կազմել է 160 մլրդ դրամ: Հատկանշական է, այս տարի Ամերիաբանկն ամբողջությամբ տեղաբաշխել է իր կողմից առաջին անգամ թողարկված 100 մլն ԱՄՆ դոլար ծավալով անժամկետ պարտատոմսերը՝ ամրապնդելով Բանկի կապիտալի դիրքը եւ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան:

Բարսեղյանը ներկայացրել է MyAmeria հավելվածի նոր հնարավորությունները, ինչպես նաեւ MyHome, MyCar, MyInvest եւ MyBusiness հարթակները, առաջիկա ծրագրերը, թվայնացման եւ արհեստական բանականության օգտագործման ուղղությամբ բանկի կողմից իրականացվող նախաձեռնությունները:

Թվային հարթակների զարգացմանն ու կատարելագործմանը զուգահեռ՝ Ամերիաբանկը նաեւ մեծ ուշադրություն է դարձնում մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը՝ հաճախորդներին հենց իրենց համայնքներում մոտ լինելու նպատակով: Մասնավորապես, այս տարի արդեն իսկ բացվել են Ամերիայի առաջին մասնաճյուղերն Արարատի մարզում եւ Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանում, իսկ մինչեւ տարեվերջ սպասվում է եւս երկու մասնաճյուղի բացում, այս անգամ հատուկ Բանկի Premium եւ Persona կարգավիճակ ունեցող հաճախորդների համար:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ԲԱՔՄԱՔԱՎԱԿ ԱՍՏՂԵՐ

Ներկայացնում ենք Հոլիվուդի բազմազավակ աստղերին:

Իլոն Մասկ՝ 14 (պաշտոնապես ճանաչված) երեխա

Հայտնի մարդկանց աշխարհում շատերը իրենց մեծ կարողություններն օգտագործել են մեծ ընտանիքներ կազմելու համար: Դրա վառ օրինակն է տեխնոլոգիական ձեռնարկատեր Իլոն Մասկը, որն ունի առնվազն 14 պաշտոնապես ճանաչված երեխա: Նրանք ծնվել են երեք տարբեր հարաբերություններից՝ վեցը՝ Ջասթին Ուիլսոնից, երեքը՝ երգչուհի Գրայմսից, եւ չորսը՝ Շիվոն Զիլիսից:

Չարլի Չապլին՝ 11 երեխա

Բրիտանացի դերասան, ռեժիսոր եւ կոմպոզիտոր Չարլի Չապլինը չորս անգամ ամուսնացել է եւ ընդհանուր առմամբ ունեցել 11 երեխա՝ իր երկու կանանցից: Նրանցից ութը ծնվել են Ունա Օ'Նիլի հետ ամուսնությունից, իսկ երեքը՝ դերասանուհի Լիտա Գրեյից:

Սթիվեն Սփիլբերգ՝ 7 երեխա

Հոլիվուդյան բլոկբաստերների ստեղծման հետ մեկտեղ Սթիվեն Սփիլբերգը հասցրել է նաեւ մեծ ընտանիք կազմել: Հայտնի ռեժիսորն ունի յոթ երեխա՝ մեկը՝ նախկին զուգընկերուհի Էմի Իրվինգից, իսկ մյուսները՝ դերասանուհի Քեյթ Քեփշոուի հետ ամուսնությունից: Նրանցից երեքը որդեգրված են, իսկ երեքը՝ կենսաբանական:

Բրեդ Փիթ եւ Անջելինա জոլի՝ 6 երեխա

Բրեդ Փիթի եւ Անջելինա জոլիի ամուսնությունը երկար տարիներ համարվում էր Հոլիվուդի ամենահայտնի զույգերից մեկը: Նրանց 12-ամյա հարաբերությունների ընթացքում (2004-2016 թվականներին) զույգն ունեցավ երեք կենսաբանական երեխա՝ Շայլո, Վիվիեն եւ Նոքս, ինչպես նաեւ որդեգրեց երեք երեխայի՝ Մեդոքսին, Փաքսին եւ Զահարային: Հետագայում նրանք բաժանվեցին:

Քրիս জեններ՝ 6 երեխա

Քրիս জենները համարվում է 21-րդ դարի ամենահայտնի մայրերից մեկը: Նրա վեց երեխաներն աշխարհահռչակ են: Ռոբերտ Քարդաշյանի հետ ամուսնությունից նա ունի երեք դուստր եւ մեկ որդի՝ Քորթնի, Քիմ, Քլոե եւ Ռոբերտ Քարդաշյանները, իսկ Բրյուս জենների (ներկայում՝ Քեյթլին জեններ) հետ՝ երկու դուստր՝ Քենդալ եւ Քայլի জեններ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԾԵԼ Է

Կատալոնական «Բարսելոնայի» եւ Իսպանիայի ազգային հավաքականի նախկին պաշտպան Ժերար Պիկեն, նոր մրցաշրջանին ընդառաջ, գնահատել է ուժերի դասավորվածությունը «կապտանռնագույնների» եւ Մադրիդի «Ռեալի» միջեւ, գրում է armsport-ը: ««Բարսան» նախկինի պես գերազանցում է Մադրիդի «Ռեալին», այս պահին թիմն ավելի ուժեղ է: Վերջին երկու առաջնություններում տարած հաղթանակը որոշակի կարգավիճակ եւ հեղինակություն է հաղորդում՝ թույլ տալով մրցաշրջանը սկսել ֆավորիտի դերում: Սակայն դա դեռ պետք է ապացուցել խաղադաշտում: Խաղացողներն ու թիմն արդեն հարմարվել են իրերի ներկայիս դրությանը: Խոսքը կայունության մասին է. Ֆլիկը թիմի հետ աշխատում է արդեն երրորդ տարին, իսկ ֆուտբոլիստներն ամբողջությամբ յուրացրել են աշխատանքի ձեւաչափն ու խաղաոճը, ինչը նրանց զգալի առավելություն է տալիս»,- Պիկեի խոսքերն է մեջբերում Sport.es պարբերականը:

ԺԱՄԱՆԵԼ Է

Անգլիական «Մանչեսթեր Սիթիի» եւ Իսպանիայի ազգային հավաքականի կիսապաշտպան Ռոդրի Էռնանդեսը ժամանել է Մադրիդ: armsport-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է իսպանական Marca պարբերականը: Ինչպես ավելի վաղ հաղորդվում էր, ֆուտբոլիստի այցի նպատակը ոչ թե տրանսֆերային բանակցություններն են, այլ մեջքի վիրահատությունը: Այն նախատեսված էր հուլիսի 27-ին եւ չի պահանջում հոսպիտալացում, ինչը թույլ կտա Ռոդրիին չխախտել ժամանակացույցն ու բնականոն կերպով սկսել մինչմրցաշրջանային նախապատրաստական փուլը: Ակնկալվում է, որ կիսապաշտպանը բաց կթողնի «Մանչեսթեր Սիթիի» ասիական շրջագայությունը: Նրա հետ միասին թիմին կարող են չմիանալ նաեւ Էրլինգ Հալանդը, Ռայան Շերկին եւ նորեկ Էլիոթ Անդերսոնը, որոնք աշխարհի առաջնությունից հետո հավելյալ հանգստի հնարավորություն են ստացել:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Ռոդրին հայտնվել էր Մադրիդի «Ռեալի» տրանսֆերային հետաքրքրությունների կենտրոնում, սակայն «քաղաքայիները» մտադիր են երկարաձգել իսպանացու հետ պայմանագրի ժամկետը:

ՇԱՐՔԻՑ ԴՈՒՐՍ Է ՄՆԱՑԵԼ

Մադրիդի «Ռեալի» հեռանկարային կիսապաշտպան Տիագո Պիտարչը տեւական ժամանակով շարքից դուրս է եկել: Ըստ armsport-ի՝ այս մասին հաղորդում է Cope պարբերականը: Աղբյուրի տեղեկություններով՝ 18-ամյա ֆուտբոլիստը ծնկի վնասվածք է ստացել թիմի մարզման ժամանակ: Խաղացողի ապաքինման համար կպահանջվի մոտ վեց շաբաթ: Այսպիսով, Պիտարչը չի կարողանա օգնել «սերուցքայիններին» նոր մրցաշրջանի մեկնարկում: Ավարտված մրցաշրջանում երիտասարդ ֆուտբոլիստը մադրիդցիների կազմում մասնակցել է 12 հանդիպման:Հիշեցնենք, որ Տիագոյի գործող աշխատանքային համաձայնագիրն «արքայական» ակումբի հետ նախատեսված է մինչեւ հաջորդ տարվա հունիսի վերջ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում օգոստոսի 1-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Ոսկե ճուտիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության մարմանն ուղղվող մեկամսյա գումարի չափը:

Վիգեն Սարգսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
Միասնական սոցիալական ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է անցկացվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի վիճակահանությունը:

Մարինե Սողոյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերի համաձայն հայտարարված զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին հանրապետական հավաքակայանում կենտրոնացված ձեւով եւ վիճակահանությամբ (բացառությամբ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիների) ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրապետական հավաքակայանում ուսումնասիրվում են հանրապետական հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների առկայությունը, ինչպես նաեւ առողջական վիճակը, որի արդյունքներով անհրաժեշտ փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում քաղաքացին կարող է վերադարձվել տարածքային ստորաբաժանում:

Պարտադիր զինծառայողների՝ ըստ զորամասերի ծառայության նշանակվելուց հետո զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության համապատասխան տարածքային տարածքային ստորաբաժանումներ է ուղարկում զորակոչված անձանց անվանացուցակը՝ նշանակված զորամասերի պայմանական համարների գրառումներով: Ստացված անվանացուցակները տարածքային ստորաբաժանումներն անհապաղ փակցնում են քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

ՀՀ պաշտպանության նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Կառավարության ֆինանսավորմամբ 2 տարի առաջ հիմնանորոգված Մեծամոր խոշորացված համայնքի մի քանի կիլոմետրանոց ճանապարհը ավիրվում է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 10 + 15 + 26 + 30
	Կոտայքի լեռներ	+ 10 + 14 + 26 + 29
	Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 + 32 + 35
	Գեղարքունիք	+ 11 + 16 + 26 + 29
	Լոռի	+ 11 + 16 + 25 + 28
	Տավուշ	+ 12 + 16 + 26 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 10 + 14 + 26 + 29
	Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 21 + 31 + 36

	Արարատ	+ 18 + 22 + 35 + 37
	Արմավիր	+ 18 + 22 + 35 + 38
	Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15 + 26 + 29
	Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22 + 36 + 39
	Սյունիքի լեռներ	+ 11 + 14 + 20 + 23
	Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17 + 26 + 29
	Սյունիքի հովիտներ	+ 19 + 23 + 32 + 35
	Երեւան	+ 21 + 23 + 34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*